

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՏԱՐԵԳԻՐՔ. ՎԵՃԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄ

2016 Թ.

Հոդված Ներկայացնելու Հրավեր

Հարգելի Գործընկեր,

ԷյԴԻԱր Փարթներս ընկերությունը ձեռնարկել է իրավական նյութերի հավաքածու/տարեգրքի (Տարեգիրք) հրատարակում, որի առաջին՝ 2016 թ.-ի համարը ամբողջությամբ նվիրված է վեճերի այլընտրանքային (արտադատարանային) լուծման ոլորտին և նշված ոլորտին առնչվող խնդիրներին:

Ի նկատի ունենալով, որ տվյալ ոլորտը համեմատաբար նոր է Հայաստանում և միջազգային փորձի համեմատությամբ դեռևս գտնվում է զարգացման սկզբնական փուլում, ոլորտում առկա հարցերի, տեսական և գործնական դժվարությունների և նման խնդիրների շուրջ ձևավորված միջազգային փորձի քննարկումն ու ուսումնասիրությունը պետք է մեծապես օժանդակեն ոլորտի զարգացմանն և կարգավորմանը:

Տարեգիրքը նաև լուրջ հնարավորություն կընձեռի դատավորներին, իրավագետներին, դասախոսներին, փորձառու և սկսնակ իրավաբաններին, ինչպես նաև իրավական ոլորտում գործունեություն իրականացնող մասնագետներին կիսվելու ոլորտին առնչվող իրենց փորձով, մտքերով ու առաջարկներով՝ հանդես գալով Տարեգրքի էջերում:

❖ Ինչպիսի Հոդվածներ

Տարեգրքում հանդես գալու համար անհրաժեշտ է ներկայացնել վեճերի այլընտրանքային ոլորտին առնչվող հոդվածներ, որոնք կհանդիսանան նորույթ հայ իրավական գիտական գրականությունում, կառաջարկեն նոր գործնական մոտեցումներ և մեկնաբանություններ տվյալ ոլորտի վերաբերյալ թե՛ Հայաստանում, և թե՛ միջազգային փորձի տեսանկյունից:

❖ Ինչպես ենք ընտրում

Ներկայացվող հոդվածները պետք է նախկինում տպագրված չլինեն և լինեն հայերեն, անգլերեն կամ ռուսերեն լեզվով: Խմբագրական Խորհրդի որոշումը հոդվածի տպագրվելու վերաբերյալ վերջնական է ու անվիճելի: Խմբագրական Խորհուրդը իրավունք ունի ներկայացված հոդվածում որոշակի բարեփոխման կամ լրացման առաջարկներ ներկայացնել հեղինակին:

Տարեգրքում հրատարակվող հոդվածները պետք է առնվազն համապատասխանեն հետևյալ չափանիշներին՝

- Հոդվածի թեման համապատասխանում է Տարեգրքի ոլորտին,
- Հոդվածում պետք է ներկայացված լինի օրենսդրական, պրակտիկ կամ տեսական խնդիր և առաջարկվի դրա լուծման տարբերակները,

- Հոդվածի խմբագրական հստակացումը կողմից սահմանված ձևաչափի համապատասխանություն,
- Հոդվածի ծավալի սահմանափակում՝ առավելագույնը 10,000 բառի սահմաններում,
- Հոդվածի մտքի և իմաստի մատչելիություն,
- Հոդվածի վերջում հեղինակը պետք է ներկայացնի հոդվածի ամբողջական և վերջնական ամփոփում:

Հոդվածների համապատասխանությունը և հրատարակման վերջնական որոշումը կայացվում է խմբագրական հստակացումից: Չհրատարակվող հոդվածը կվերադարձվի հեղինակին:

Հոդվածում տեղադրվող նկարների, պատկերների և այլնի հեղինակային իրավունքի ձեռքբերման պատասխանատվությունը կրում է հեղինակը:

❖ Երբ Դիմել

Հեղինակները իրենց հոդվածի տպագրության համար կարող են դիմել հոդվածն ամբողջական և ավարտուն տեսքի բերելուց հետո միայն:

Հոդվածների ներկայացման վերջնաժամկետն է 2016 թ.-ի դեկտեմբերի 31-ը:

❖ Ինչպես Դիմել

Հեղինակները կարող են ներկայացնել իրենց հոդվածները էլեկտրոնային տարբերակով՝ ուղարկելով դրանք info@adr.am էլ. հասցեին և գրության վերնագրում նշելով “Armenian Law Review Submission”:

❖ Ուղեցույց Հեղինակներին

Խնդրում ենք կարգալ և պահպանել հետևյալ պայմանները, որոնք կօգնեն առավել արագ և արդյունավետ դարձնել հոդվածների հրատարակման ծավալուն գործընթացը: Հրատարակիչը՝ ԷյԴԻԱր Փարթներս ՍՊԸ-ն, իրավասու է հետ վերադարձնել Տարեգրքի պահանջներին չհամապատասխանող նյութերը:

Հոդվածները պետք է նաև համապատասխանեն ներքոնշյալ չափանիշներին.

- Հոդվածները պետք է ներկայացնել Word ֆորմատով,
- Լուսանցքները՝ 2 սմ բոլոր կողմից,
- Բառերի առավելագույն քանակը 10,000՝ ներառյալ վերնագիրը և հղումները,
- Տառաչափը՝ 12, հղումները՝ 10,
- Տողերի հեռավորությունը պետք է լինի 1,5,
- Տառաձևը՝ Times New Roman կամ Sylfaen,
- Էջերը պետք է լինեն համարակալված,
- Նկար կամ պատկեր պարունակող ֆայլերը պետք է լինեն բարձրորակ:

Ծանոթություն

Բոլոր ներկայացվող հոդվածները կարող են ենթարկվել որոշ խմբագրական փոփոխությունների, որոնց ավարտից հետո նյութը PDF ֆորմատով կուղարկվի հեղինակին հաստատման:

Սահմանափակման Քաղաքականություն

Ներկայացվելու և պես հոդվածի բովանդակության վրա կղրվի սահմանափակում մինչև հրատարակման մասին վերջնական որոշման կայացում, իսկ հրատարակման որոշում դեպքում՝ մինչև հոդվածի հրատարակման օրը:

Խմբագրական խորհրդի կազմն է.

Աիդա Ավանեսյան, ի.գ.դ., ԷյԴԻԱր Փարթներս ընկերության արբիտրաժային գործերով տնօրեն, մեդիատր, արբիտր, Ամերիկյան համալսարանի դասախոս

Արամ Օրբեյան, ի.գ.թ., ԷյԴԻԱր Փարթներս ընկերության արբիտր, Կոնցեռն-Դիալոգ փաստաբանական ընկերության ավագ գործընկեր, Ֆրանսիական համալսարանի դասախոս

Արմեն Հայկյանց, ի.գ.դ., ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ

Եղիշե Կիրակոսյան, ի.գ.թ., ԷյԴԻԱր Փարթներս ընկերության արբիտր, IDeA հիմնադրամի գլխավոր իրավաբան, Ամերիկյան համալսարանի դասախոս

Հրաչյա Մարանգույան, Ամերիա բանկի իրավախորհրդատու, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի դասախոս

Մուշեղ Մանուկյան, ի.գ.թ., ԷյԴԻԱր Փարթներս ընկերության գլխավոր տնօրեն, արբիտր, մեդիատր, Նեյշնլ Ինսթրումենթս ընկերության ռեգիոնալ իրավաբան, Ամերիկյան համալսարանի դասախոս

Նաիրա Մարգարյան, Հայաստանի բանկերի միության «Ֆինանսական արբիտրաժ» հիմնարկի նախագահ, Ֆրանսիական համալսարանի դասախոս

Հոդվածի վերաբերյալ չհրատարակելու որոշման կայացման դեպքում այն կվերադարձվի հեղինակին, ով ազատ է այն այլապես հրատարակել:

Հոդվածի հրատարակման դեպքում դրա հեղինակային իրավունքը կշարունակի պատկանել հեղինակին, սակայն հեղինակը պետք է տրամադրի իրավունք ԷյԴԻԱր Փարթներսին այն հրատարակելու և հրատարակված ցուցադրելու:

Առավել մանրամասն տեղեկությունները տեղադրված են ԷյԴԻԱր Փարթներս ընկերության կայքում՝ www.adr.am:

Իսնդրում ենք տարածել սույն նյութը հավանական հեղինակների շրջանում:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

Մուշեղ Մանուկյան, ի.գ.թ.
ԷյԴԻԱր Փարթներս ընկերության
Գլխավոր տնօրեն, մեդիատր և արբիտր